վածքը ամբողջապես գրավելու և նրանց խպառ դրկելու ժառանգության իրավունքից։

16—18-րդ դդ. մեզ հասած բազմաթիվ կալվածագրերում հանդես եկող օտարող կամ գնող կողմերի անվան հիշատակմանը հաճախ նախորդում է «նոր մահմեդական» («ջադիդ-ուլ-իսլամ»—جديد الاسلام) տերմինը, որից երևում է, որ տվյալ անձնավորությունը նոր է մահմեդականություն ընդունել։ Այդ պարզ երևում է հատկապես այն վավերագրերից, որոնց մեջ նոր մահմեդականություն ընդունած կողմը ժառանգական վեճերով հանդես է գալիս իր այն հարազատների դեմ, որոնք դեռևս պահպանում էին քրիստոնեական հավատը։

Այս առթիվ տրված բազմաթիվ բողոքագրերի և դատական պրոցեսների բավական ստվար գործեր կան պահպանված։ Այդ գործերի ուսումնասիրությունից պարզվում է, որ, մասնակի բացառություններով, ժառանգության խնդրում միշտ էլ առաջնությունը տրվում էր մահմեդականություն ընդունած ժառանգներին։ Բնորոշ է, որ կենտրոնական Դիվան-ալ-սադարաթի կողմից տրված ֆեթվաներում, որոնք առանց բացառության բոլորն էլ հաստատված են շահական ֆերմաններով, այդ առաջնության հարցը այնքան էլ սուր կերպով չի դրված։ Մանավանդ, որ պահպանված վավերագրերը մեծ մասամբ վերաբերում են ոչ անմիջական ժառանգների միջև առաջացած վեճերին։ Այնինչ, Երևանի, Նախիջևանի և այլ վայրերի շարիաթական ատյանների ֆեթվաներում, որոնց մեջ քննարկված են նաև անմիջական ժառանգների միջև առաջացած վեճերը, մուսուլման ժառանգներին տրվող առաջնության մոմենտը առանձնապես շեշտված է։

16—17-րդ դդ. հայկական աղբյուրներում ևս կան որոշակի վկայություններ այն մասին, որ շատ հաճախ որևէ մահմեդական դիմում էր Շար'ին և մի քանի կեղծ վկաներով «ապացուցում», որ ինքը այսինչ հայի ազգականն է և այդպիսով զավթում նրա ամբողջ ունեցվածքը, կամ նրա մի մասը։ Այսպես, օրինակ, Զաքարիա սարկավագը իր «Պատմագրության» Ա. հատորի 42-րդ գլխում պատմում է, թե ինչպես քանաքեռցի ոմն Միքայել եպիսկոպոսի դեմ մի պարսիկ վեճ է սկսում և դիմելով Շար'ին պընդում է, որ ինքը ազգական է նրան, ուստի պետք է նրա հարստությունը վերցվի նրանից և տրվի իրեն։

Սկզբում Երևանի Շեյխ-ուլ-իսլամը բավարար ապացույցներ չգտնելով մերժում է նրա պահանջը և բազմաթիվ վկաների ստորագրությամբ կազմում է մի արձանագրություն, որով հերքվում է նրանց ազգակցությունը։ Սակայն հետո պարսիկին հաջողվում է կաշառել Շեյխ-ուլ-իսլամին, որը երկրորդ գրությամբ իրավունք է տալիս նրան սեփականացնել Միքայել եպիսկոպոսի այգին։ Իսկ երբ վերջինս նորից բողոքում է շեյխին, նա պատասխանում է, թե «Ես ոչ էի ճշմարտությամբ վերահասու եղեալ իրացն և այժմ հաւաստիաւ ծանեալ, զի ազգական քո է նա, և ըստ օրինաց մերոց զամենայն ինչքն քո նմա պատկանի»[1]։

Թեև ի վերջո Միքայել եպիսկոպոսը Կոտայքի մելիք Դավութի միջոցով կարողանում է իր բողոքը տեղ հասցնել և Երևանի Թահմազկուլի խանը տեղեկանալով այն մասին, որ Շեյխը կաշառք է վերցրել ու փոխել իր վճիռը,

[1] Զաքարիա Սարկավագ, հ. Ա. էջ 73։